

№ 153

087.1
Գ-13


Իրավաբանական լիցենզիա № 10

ՌՈՒՐԵՆ ԳԱՐԻԷԼԵԱՆ

ՈՎԿԻԱՆԻ ԹԱԳԱԻՈՐԸ

(ԿԷՏԻ ՄԱՍԻՆ)

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՅՑ



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Էլեկտրատպարան օր. Ն. Աղանեանի, Պոլից. 7.

1913

16049

30 MAY 2011

Հրատարակութիւն «ՆՈՒՆԻՍ»
Ընկերութեան № 10

087.1

9-13

ս. Մ.

ՌՈՒՐԵՆ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՈՎԿԻԱՆԻ ԹԱԳԱՒՈՐԸ


(ԿԷՏԻ ՄԱՍԻՆ)

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՅՑ



1002
6902

Յանդակ «ՀԱՍԿԵՐ» ամսագրի



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Էլեքտրատպարան օր. Ն. Աղանեանի, Պոլից. 7.

1913

ՀԱՅԿԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՔԲԵՄ ՑԱՐ.
ԴԱՏԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ,
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԽԱՆՈՒ
ՑՈՒՔԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆՈՒԹՅԱՆ
28 ՄԱՐՏԻ 1919 Ք.

ՈՎԿԻԱՆԻ ԹԱԳԱՒՈՐԸ

(Կէսի մասին)

Լսել էք կէտի մասին, այո՛, այն կէտի մասին, որին մենք բոլորս, երբ դեռ փոքր էինք, ձկան տեղ էինք ընդունում:

Ի հարկէ շատ-շատերդ լսած կը լինէք այդ ձկանման ծովային արքայի մասին:

Ես էլ մի քանի դէսից-դէնից լսած տեղեկութիւններ ունէի, բայց այն, ինչ որ ինձ մի նորվեգիացի նաւաստի պատմեց—ես բաւականին հետաքրքիր գտայ. թւում է ինձ, որ եթէ ես իմ լսածը պատմեմ սիրելի ընթերցողներին, նրանք ինձանից գոհ կը մնան:

Ինչո՞ւ մենակ ես իմանամ նաւաստու պատմածը: Ես նրան էլ ասացի, որ միևնոյն է, ինչ որ նա ինձ պատմի, ես էլ ուրիշին եմ պատմելու:

Այդ խօսքերին վրա նաւաստին ծիծաղեց ու ասաւ.

—Ուզում ես հազար մարդու էլ պատմի, ինչ է որ...

Նաւաստի Խրիստիանի (այդպէս էր նրա ա-

նունը) հետ ես ծանօթացայ շոգենաւում, բոլորովին հեռու իր հայրենիքից:

Իրար ծխախոտ առաջարկելով՝ մենք շուտով ծանօթացանք: Նա հասակաւոր մարդ էր: Գերմանական չիբուխը նրա անբաժան ընկերակիցն էր: Այդ չիբուխից նա երբէք չէր բաժանւի:

Երբ ես առաջարկեցի նրան գլանակ, նա պատուեց բարակ թուղթը, ծխախոտը ածեց չիբուխի մէջ, վառած լուցկին մօտեցրեց ծխախոտին ու մեծ ախորժակով սկսեց ներս քաշել «ազնիւ» (ինչպէս նա էր ասում) ծխախոտի ամբողջ հիւթը:

Ձը գիտեմ ինչպէս եղաւ, խօսք բացւեց կէտի մասին: Կարծեմ այսպէս էր՝ ես նրա դէմքին՝ ճակատին, ձախ աչքի տակին, ինչ որ մանր վերքերի հետքեր նկատեցի. հարցրի պատճառը: Նա յանկարծ գլուխը շարժեց, ձեռքը տարաւ վերս բացականչելով.

—Օ... անցած պատմութիւն է...

Բայց ես շատ հետաքրքրւեցի թէ այդ ի՞նչ պատմութիւն է:

Բանից դուրս եկաւ, որ Խրիստիանը մի ժամանակ կէտորսութեամբ էր պարապում:

Խնդրեցի նրան կէտորսութեան մի քանի դէպքեր պատմել: Նա առանց սպասելու, որ խնդիրս երկրորդ անգամ կրկնեմ, իսկոյն դիմեց իր անցեալի յիշողութիւններին:

Կէտորսութեան հետ մեծ կապ ունէին նրա

դէմքի վերքերը:

Այսպէս սկսեց իր պատմութիւնը նաւաստի Խրիստիանը:

«Հայրենիքս է Նորվեգիան: Սկանդինաւեան թերակղզու հիւսիսային Համերֆէստ քաղաքումն էի ապրում: Պարապում էի ձկնորսութեամբ: Շատ էր պատահում խոշոր ձկներ որսալ և ամեն անգամ էլ որսս անպակաս էր:

Կեանքս խաղաղ, հանգիստ առաջ էր գնում: Որքան հարկաւոր էր աշխատում էի. աշխատածս ընտանիքիս հետ ուտում: Գոհ էի ունեցածովս:

Բայց մի օր (սատանան տանի այդ օրը), երբ մեր քաղաքում լուր տարածւեց, թէ ովկիանի հիւսիսային մասերում մեծ թւով կէտ էր յայտնւել, իմ մէջ մի համարձակ ցանկութիւն ծագեց. կարծես այդ օրը զգացի թէ ունեցածս քիչ է. բայց այդ մասին յետոյ:

Գիտե՞ս՝ կէտ ի՞նչ ասել է: Տեսել ես այդ մեծ, զարմանալի կենդանուն: Ձուկ ասես՝ ձուկ չի, Աստուած է վկայ, ինքս էլ չը գիտեմ ի՞նչ է, բայց որ ձուկ էլ չի, թէև նրա նման է—դրան ես հաւատացած եմ:

Հա, էն եմ ասում, որ մեր քաղաքում հէնց որ լուրեր տարածւեցին կէտերի մասին, մի քանի օրից յետոյ էլ իմացանք, որ երկու թէ երեք ձկնորսական նաւեր խորտակւել են. հինգ մարդ էր ջրի տակ գնացել:

Այդ լուրը բաւական էր, որ քաղաքը ոտքի կանգնէր: Մեր քաղաքը, պէտք է ասել, հէնց Ուկրաինի քթին էր. այդ է պատճառը, որ լուրերը մեզ շուտ էին հասնում: Յետոյ մի բան էլ պիտի ասեմ, որ մեր կողմերում շատ մարդիկ կային, որ կէտ որսալով էին ապրում և հարստանում էին:

Երբ նաւերի խորտակման լուրերը հասան, էլ մարդ չը կար, որ կէտի մասին չը խօսէր: Խեղճ զոհերի պատճառը կէտն էր:

Նաւաստիները, ձկնորսները սկսեցին փոքր ինչ վախենալ, էլ շուտ-շուտ ուկրաին չէին դուրս գալիս. սակայն ձկնորսների համար կատարեալ տօն էր. նրանց ուրախութեանը չափ չը կար. փոյթ չի, որ նաւեր են խորտակուում, մարդիկ են զոհուում... բախտի բան է. փորձանքների էլ սովոր են բոլորը:

Նրանք լաւ գիտէին, որ երկար չի քաշի, ու կէտերը կը ցրւեն: Լաւ ժամանակ էր մեծ թւով կէտ որսալու:

Օր չէր անցնում, որ այս կամ այն անվախ կէտորսը նաւ նստելով, ուկրաինի խորքերը չանցնէր:

Եւ ի՞նչ: Գրպանները ուռած էին վերադառնում: Ձեր փողով հաշւած, մի քանի հազար ռուբլի էին վաստակում:

Ես էլ լաւ գիտէի, որ կէտից շատ ու շատ մեծ օգուտներ կարելի է տեսնել:

Ի՞նչ ես կարծում... Վճռեցի ձկնորսութիւնը թողնել և կէտի ետեւից ընկնել:

Մէկ կէտորսի հետ միացայ: Թէև այդ գործից բան չէի հասկանում, բայց պիտի ասեմ, մի կլորիկ գումար ունէի. այդ գումարովս միացայ կէտորսի հետ և մեծ յոյս ունէի, որ բաւականին կը շահեմ:

Գործերս լաւ էին գնում: Մի քանի տարի աշխատեցիք: Մի օր էլ զգացի, որ գրպանս փոքր ինչ ուռել է, հա, այժմ կլորիկ գումարիս վրա մի կլորիկ գումար էլ աւելացել է:

Մի օր ինքս ինձ մտածեցի.

—Այ Խրիստիան, լաւ լսիր, դու ինչո՞վ ես պակաս միւսներից: Ձեռքեր չունես, ոտքեր չունես, խելք և հասկացողութիւն չունես: Մի գուցէ վախկոտի մէկն ես. և վերջապէս փողդ է պակաս: Ոչ էս, ոչ է՛ն և ոչ է՛ն մէկը: Բոլորից էլ փառք Աստծու գուրկ չէի: Ուրեմն ինչո՞ւ մենակ գործի դուրս չը գամ:

Ինչ մեղքս թաքցնեմ—մի տեսակ փողին կպել էի. շատ սիրեցի. ասենք մեր աշխարհում կոյ մէկը, որ փող չը սիրէ... Իհարկէ ոչ, այնպէս չէ. այնպէս է: Մտածելն ու կատարելը մէկ եղաւ:

Մի նաւ վարձեցի: Նաւաստիներ և օգնականներ էլ վարձեցի: Հարկաւոր գործիքներ ձեռք բերի՝ յատուկ թնդանօթ, հարպուն և մի քանի այլ գործիքներ: Ամեն ինչ պատրաստեցի, մի

քանի օրւայ պաշար վերցրի. խմիչք էլ—ինչո՞ւ ծածկեմ, դէպի կենդանարար հեղուկը փոքրիկ ձգտում ունէի, բայց Աստած է վկայ հարքողը չեմ. հէնց այնպէս, մէկ-մէկ հարկաւոր է, մի փոքրիկ բաժակ... տաքանալու... ուժ ստանալու համար:

Հա, պաշարեղէն, խմիչք—մի խօսքով ինչ որ հարկաւոր էր թէ ինձ համար և թէ որսի համար —բոլորը վերցրի, նստեցինք նաւս և ճանապարհ ընկանք:

Ուղևորւեցինք դէպի ովկիանի հիւսիս-արեւելեան կողմերը: Ես արդէն հմուտ էի, լաւ գիտէի թէ որ կողմերում աւելի յաճախ կէտի կտրելի է հանդիպել:

Մեր բախտից քամին հակառակ չէր, փչում էր նա հէնց մեր ընտրած ճանապարհի ուղղութեամբ: Առագաստները արձակեցինք: Նաւս աւելի արագ սկսեց վազել:

Մի օր անցաւ: Հետեւեալ օրը ես յոյս ունէի որսիս հանդիպելու: Անհամբերութիւնից հանգիստ չունէի: Մեծ-մեծ ծրագիրներ էին անցնում մըտքովս: Մտածում էի՝ եթէ այսքան կամ այնքան կէտ որսամ, այս կ'առնեմ, այն կ'առնեմ: Անպատճառ մտադիր էի ծովափնեայ գիւղերից մէկում մի լաւ հող գնել, տնակ շինել... Ամենից լաւն է պատմեմ թէ ինչպէս հանդիպեցի առաջին կէտին:

Երկրորդ օրն էր: Կապիտանի տնակից հե-

ռադիտակով հեռում, ջրի երեսին մի սև երկար գիծ նշմարեցի: Այդ գիծը անշարժ չէր. ապա մի փոքր յետոյ մի ուրիշն էլ երևաց. առաջինը անյայտացաւ: Օգնականներս էլ վաղուց նկատել էին սև գծերը. բոլորս լաւ գիտէինք թէ այդ ինչ գծեր էին: Կասկած չը կար, որ կէտին էինք մօտենում:

Շուտով, երբ նաւը աւելի էս մօտեցաւ, երկուսի փոխարէն չորսը երևաց:

—Խրիստիան—ասաց ինձ գլխաւոր օգնականս—մի քանի հատ են: Եթէ երկուսին էլ բռնենք, մեծ հարստութեան տէր կը դառնանք: Սպասենք մի փոքր էլ, թող քիչ իրարից հեռանան:

Աւելի ևս մօտեցանք: Ուշադրութեամբ դիտում էինք ծովային արքաներին: Շարունակ ծովի երեսին չէին մնում: Պոչի երկճիւղանի լողաթաթը շարունակ գործում էր, ճիշտ այնպէս, ինչպէս շոգենաւի պտուտակը... Տեսնում ես—այդ լողաթաթը հորիզոնական դրութեամբ փուլեց ջրի երեսին. մէկ էլ լաւեց—ջուրը սկսեց փրփրէլ երեսին. մէկ էլ լաւեց—ջուրը սկսեց փրփրէլ, ապա կէտը արագութեամբ լողաց առաջ ու մեզանից հեռացաւ: Այդ մեզ համար ամենամօտ կէտն էր: Մենք հետեւեցինք նրան: Հանդարտ լողում էր կէտը, մէկ էլ տեսար պոչի լողաթաթը սկսեց արագութեամբ գործել, կէտը էլի առաջ վազեց, ապա սկսեց ջրի տակ անցնել:

և վերջապէս անյայտացաւ: Բայց ես լաւ գիտէի, որ կէտը երկար չի մնում ջրի տակ: 15 ըոպէից յետոյ կէտը նորից դուրս է գալիս:

Դեռ այն ժամանակ, երբ ես ուրիշի մօտ էի ծառայում, ինձ համար անհասկանալի էին կէտի մի քանի յատկութիւնները: Պիտի խոստովանեմ, որ առաջներում ես էլ կէտին ձկան տեղ էի ընդունում: Եւ ճիշտ որ՝ կատարեալ մեծ ձուկ լինի կարծես: Բայց դու մի ասի, անպիտանը իսկական կաթնասուն է: Ես իմ աչքերով տեսայ նրա ծծերն ու թոքերը: Դրսի օդով է շնչում: Կէնց դրա համար էլ 10—15 ըոպէն մի անգամ ջրի երեսն է դուրս գալիս նոր օդ ներշնչելու:

Ինձ մի բան է զարմացնում,—այդ ի՞նչպէս եղաւ, որ կաթնասունների մեծ մասը չորքոտանի է և ցամաքի վրա է ապրում, իսկ այս ափահա կաթնասունը ջրի մէջ է ապրում և ի՞նչպէս է կարողանում իր այնքան մեծ մարմինը ջրի մէջ պահել—այդ բաւական չէ—դեռ այնպէս է վազում ջրի մէջ, որ ետևից չես հասնի»:

Խրիստիանը մի ըոպէ լռեց: Նա սպասում էր բացատրութեան:

Ես ասացի.

—Դու ինքդ էլ լաւ գիտես, Խրիստիան, որ ջրի մէջ լողալու համար անհրաժեշտ է այնպիսի ձև ունենալ, որ հեշտ լինի ջուրը ճղել: Ո՞րն է հեշտ. ծովի վրա ենք՝ երկու գերան պիտի քաշենք, մէկի երկու ծայրից թուկ ենք կապում և

թուկերը միացնելով քաշում, իսկ միւս գերանի միայն մէկ ծայրից ենք թուկը կապում և քաշում...

Խրիստիանը իսկոյն ասաւ.

—Շատ պարզ է, որ գերանը երկարութեամբ պիտի քաշել, մէկ ծայրից կապել, իսկ լայնութեամբ քաշելը դժւար է...

Ես շարունակեցի.

—Ինչո՞ւ ասորճանակի, հրացանի գնդակները երկար ու նեղ են լինում: Այդ նրա համար է, որ գնդակը հեշտութեամբ օդը ճղի ու իր նպատակին հասնի: Երբ նա ճղում է օդը, օդը ճընշում է գնդակի վրա... Բայց օդը շատ չի կարող գնդակի առաջն առնել, խիստ չի կարող ճընշել, որովհետեւ, թէև գնդակը երկար է, բայց վային լողացող կենդանիների մեծ մասը նեղ լիկ ձև ունեն, իլիկի նման... Ձուկն էլ իլիկի ձև ունի և մենք տեսնում ենք, նա հեշտութեամբ ճղում է ջուրը, նոյնպէս ջրի հոսանքի դէմ լողում...

Կէտը ձուկ չի, բայց ապրում է ջրում, տես նա եթէ ինչպէս կաթնասուն ունենալ իր ազգական ցամաքի կաթնասունների նման լայնացած մարմին, չէր կարողանայ ջրում ապրել և լողալ: Ուրեմն կէտն էլ պէտք է ձկան պէս իլիկի ձև ունենայ: Ուրիշ ձև ունենալը ջրի մէջ անյարմար է: Եթէ կովին նոյն իսկ լողաթափեր տաս և թոյ

որ լողալ իմանայ—դարձեալ նրա մարմնի լայնութիւնը միշտ կը խանգարի արագ և լաւ լողալուն...

Ահա ինչու թէ ձկները, թէ բոլոր այլ ջրային մեծ կենդանիները իլիկի ձև ունին։—

Բացատրութեանս միջոցին Խրիստիանը շարունակ գլուխը շարժում էր և բերանը բաց խոշոր աչքերով ինձ նայում...

Նա ասաւ.

—Ճշմարիտ ես ասում... շարունակիր, հասկացայ... Ինչպէս եղաւ, որ այդ կաթնասողներ ջրի մէջ ընկաւ...

—Խրիստիան, ներիր, որ քո պատմութիւնդ խանգարեցի... բայց այս ըոպէիս այդ էլ ասեմ, յետոյ դու կը շարունակես...

Դու գիտես, որ կէտի պոչը երկճիւղանի լողաթաթ է։ Հորիզոնական դրութեամբ փուռող այդ լողաթաթի միջոցով նա կարողանում է ծովի զանազան խորութիւնները մտնել ու դուրս գալ... դա այսպէս ասած նրա դեկն է, միւս կողմից էլ այդ լողաթաթի գործողութիւնը, ինչպէս ինքը էլ լաւ տեսար, հնարաւորութիւն է տալիս կէտին տեղից տեղ անցնելու, ուրեմն նրա շարժողութեան գործարանն է...

Խրիստիանը մէջ մտաւ նորից.

—Այո, այո, ես այդ լաւ տեսայ աչքովս, բայց եթէ իմանաս, որքան ուժեղ է այդ լողաթաթը... Օ... լաւ է չիմանաս... աչքովս, կը հա-

ւատանս, աչքովս տեսայ, ինչպէս մի անգամ իմ հարեան Իօհաննի (լաւ մարդ էր, բայց խմող էր) նաւը խորտակեց։ Կէտը կատաղած իր պոչով այնպէս խփեց նաւին, որ նաւը փշուր-փշուր եղաւ. մենք վրա հասանք ժամանակին, ազատեցինք նաւաստիներից մի քանիսին, իսկ Իօհաննը մի քանիսի հետ գնացին ջրի տակ։ Նաւը ի հարկէ ջրի տակ ընկաւ... Զարմանալի ուժ կայ այդ լողաթաթի մէջ... Բայց ես մի բան էլ տեսայ... դարձեալ լողաթաթեր. կրծքի վրա, բերանից քիչ ետեւ, երկու լողաթաթ էլ ունի...

—Այդ թէև արտաքինով լողաթաթեր են,— ասացի ես,—բայց եթէ փափուկ մասերը ոչնչացնես, կը տեսնես մատներ, իւրաքանչիւրը ոսկորներից կազմած. դա նրա առաջի վերջաւորութիւնները, ոտքերն են, որ լողաթաթեր են դարձել... Ուրեմն թաթի ներսը մենք տեսնում ենք շարան-շարան մատնոսկորներ։

—Ինչպէս թէ մատներ, — զարմացաւ Խրիստիանը։

—Ապա ինչ էիր կարծում։ Առաջ պէտք է ասեմ, ասեմք դու էլ հաւանական է գիտես, որ այդ լողաթաթերը հիմա կէտի իսկական դեկն են. նրանցով նա կարողանում է իր ճանապարհները դուրսիւր այս կամ այն կողմ, աջ կամ ձախ հորդութիւնը այս կամ այն կողմ, աջ կամ ձախ ուղղել... իսկ յետոյ պէտք է ասեմ, որ այդ կաթնոլղել... իսկ յետոյ պէտք է ասեմ, որ այդ կաթնոլղելի նախահայրերը իսկական չորքոտանի են եղել ցամաքի վրա ապրող, իսկ վերջը ծովափնեայ

կաթնասուն կենդանիներ են դարձել... Ինչպէս մեր նախահայրերը վայրենի, հում մսով ու բոյսերով կերակրող մարդիկ են եղել, նոյնպէս կէտի նախահայրերը ցամաքի կաթնասուններ են եղել...

— Ըհը՛, ասա՛, ասա՛, յետոյ, — հետաքրքրւում էր Խրիստիանը, — ես գիտեմ, մի քանի կէտանման կենդանիներ ատամներ էլ ունեն... Ասա տեսնեմ, այդ ինչպէս քո գիտնականները իրենց սենեակներում նստած այդպիսի ճիշտ և խելօք խօսքեր կարող են ասել, իսկ ես, որ շատ տարիներ կէտորսութեամբ եմ պարապել, չը կարողացայ այդ իմանալ...

— Օ՛, Խրիստիան, — ասացի, — մի կարծիլ թէ գիտնականները միշտ սենեակներում փակւած են լինում. ոչ, նրանք շարունակ ճանապարհորդում են, աչքով ամեն ինչ տեսնում, ապա խելօք խօսքեր ասում... Դեհ, Խրիստիան, հիմա շարունակիր...

— Լա՛ւ, կը շարունակեմ... Այո՛, ինչպէս դու ասացիր, ես տեսայ, ինչպէս էին գործում կէտի կրծքի լողաթաթերը — նրանցով նա իր ճանապարհի ուղղութիւնն էր փոխում... Որտեղ կանգնեցի... Հա՛, կարծեմ ասացի, որ կէտը 15 րոպէն մի անգամ ջրի երեսն է դուրս գալիս...

Նաւից մենք ուշադրութեամբ հետևում էինք կէտին։ Մենք լաւ տեսնում էինք, ինչպէս այս

կամ այն կէտը մէկ մէկ ջրի տակն էր մտնում և նորից ջրի երես դուրս գալիս։ Հազիւ ջրի երեսին էր յայտնւում, մէկ էլ տեսար քթածակերից (գլխի ամենավերին մասում) շատրւան խփեց, փրփրալից ջուրն էր ժայթքում. բերանում լցւած ջուրը դուրս էր շարտում...

Ես, որ ամենայն ուշադրութեամբ լսում էի Խրիստիանին, ստիպւած եղայ նրա խօսքը կտրել մի փոքրիկ սխալ պարզելու համար։

— Բայց, Խրիստիան, մի բան սխալ ես հասկացել. կէտը իր քթածակերից ոչ թէ ջուր է շատրւանում, այլ դա օդն է, թոքերից դուրս շատրւանում, այլ դա օդն է։ Կէտի մարմնի ներսը աթայթքող խոնաւ օդն է։ Կէտի երեսին, ով-ւելի տաք է լինում քան թէ ջրի երեսին, ով-կիանի վրա։ Մարմնի ներսը օդին խառնւում է նաև ջրի գոլորշին — օդը խոնաւ է դառնում։ Եւ երբ թոքերից մեծ ուժով խոնաւ օդը դուրս է ելնում, թոքերից մեծ ուժով խոնաւ օդը հետ ժայթքող ջրի ծովեան մէջ, խոնաւ օդի հետ ժայթքող ջրի գոլորշին խսկոյն ջուր է կտրւում ու շատրւանի պէս վերև խփում...

Խրիստիանը մի խելացի նկատողութիւն ասեց։

— Այդ կատարւում է ուրեմն ճիշտ այնպէս, ինչպէս մեր տներում ձմեռ ժամանակ։ Սենեակում օդը տաք է լինում (կէտի մարմնի ներսն էլ տաք է լինում) — և այդ սենեակի տաք օդը (որի մէջ ջուրը գոլորշիացած է) հանդիպում,

զիպչում է. փողոց նայող սառը ապակիներին և
ապակու վրա ջուր է նստում... այդ ուրեմն տաք
օդի մեջ եղած գոլորշի՞ն է... Հասկացայ... էս
ի՞նչ լաւ բաներ ես ասում...

— Խրիստիան մի բան էլ ասեմ, յետոյ շա-
րունակիր, իմացիր, պատահում է, որ կէտի
քթածակերը դեռ ջրի երես չեն հասնում, երբ
կէտը արտաշնչում է օդը (ուրեմն քիչ ջրի տակից)
ջրի տակ քթածակերից դուրս ժայթքող օդը
վեր է բարձրացնում մի քիչ էլ ովկիանի ջրե-
րից...


—Ա... ա... տես հպալա,—զարմացած գլուխը շարժելով արտասանեց Խրիստիանը,—այ գիտի հա, այնքան ժամանակ նրանց որսին կպած ու այդ էլ չիմացայ...

—Լաւ, հիմա այդ թողնենք!—ասացի ես,—
 Խրիստիան, շարունակիր պատմութիւնդ:

Խրիստիանը մաքրեց իր չիբուխը, նոր թարմ ծխախոտ լցրեց, վառեց. շրթունքները ճիւճփացնելով մի քանի անգամ ներս քաշեց ծխախոտի ծուխը և ապա բերանը բաց, ծուխը կէտի շատրւանի պէս դուրս թողեց երկու քթածակերից։

Ու շարունակեց պատմութիւնը:

— Օգնականներին վրա ես այնքան էլ վրա-
տան չէի: Ես աւելի փորձած ձկնորս էի: Թէեւ
նաւիս վրա ունէի յատուկ թնդանօթ կէտ որ-
սալու համար, բայց ես սկզբում վճռեցի դիմել
իմ սովորական միջոցին: Ես վարժւել էի մա-


$$\begin{array}{r} 1002 \\ \hline 6902 \end{array}$$


կոյկից հարպուն նետել կէտի վրա. շատ յաճախ հարւածս հասնում էր նպատակին:

Իսկոյն հրամայեցի մակոյկ իջեցնել. վեր-
ցրինք ինչ որ հարկաւոր էր: Ձեռքումս պահել
էի մի լաւ հարպուն—մի լաւ սրածայր երկաթէ
ձող՝ նա ամուր թոկով ամրացրած էր մա-
կոյկին:

Նաւաստիները սկսեցին զգուշութեամբ թիա-
վարել:

Ծովը մեղմ էր: Ալիքները չէին տատանում
մեր մակոյկը: Երկինքը թէև ամպած էր, բայց
խաղաղ ամպեր էին: Ծովային թռչունները մէ-
կէն ի մէկ անցնում էին մեր վրայով. կարծես
նրանք էլ նախազգում էին իւղալի պաշարը:

Մենք բաւականին մօտեցել էինք. այն է,
պատրաստում էի ձեռքիս բռնած հարպունը նե-
տելու, թարսի պէս կէտը մտաւ ջրի տակ: Այդ-
պիսի դէպքեր շատ են պատահում. հարկաւոր է
համբերել: Ես չը յուսահատուցի: Բախտի բեր-
մամբ մեզանից ոչ այնքան հեռու, յամենայն
դէպս հարպունի հարւածի համար յարմար, տա-
րածութեան վրա ջրի երեսից շատուան խփեց:
Կէտին էլ նկատեցի: Ուրիշն էր:

Հարպունս պատրաստեցի, անցայ մակոյկի
ծայրը: Կէտը հանդարտ օրօրւում էր ջրի երե-
սին. իսկ մեր նաւակը մօտենում ու մօտե-
նում էր:

Հասաւ յարմար ըռպէն. հարպունս ուժգին

ձգեցի ուղիղ կէտի գլխի կողմը: Հարւածս չը վրիպեց:

Բայց թէ ի՞նչ պատահեց այդ բոլորին, մինչև հիմա էլ չեմ մոռանում:

Երբ հարպունս նետուեց, գնաց ուղիղ կէտի գլխի կողմը խրւեց... բաւականին խոր էր մտել սրածայր գործիքս: Հարպունին կապած թուղը ձգւեց. յանկարծ մեր նաւակը տարուբերւեց, մեր շուրջը ալիքներ գոյացան և... Տէր Աստուած, ի՞նչ եղաւ... շփոթեցինք... Ճիշտ է, կէտը հարւածից վերաւորւել էր, բայց ոչ մահացու... հարպունը մնաց կիսակենդան կէտի գլխին:

Վերաւորւած, խիստ զայրացած կէտը սկսեց փախչել... աւելի ճիշտն ասած, սկսեց այս ու այն կողմ ընկնել... Իսկ մեր նաւակը... Օ՛, նա փոքրիկ տաշեղի նման տարուբերւում էր ալիքներին:

Դէ, մարդ ես մի շփոթւիր:

Կէտը արագութեամբ առաջ էր վազում, իսկ մենք գլուխներս կորցրած նրա ետևից քաշ գալիս:

Քանի-քանի անգամ քիչ էր մնում մեր նաւակը խորտակէր... բայց Աստուած մեզ հետ էր:

Մի խօսքով ինչ երկարացնեմ, էլ կէտի մասին ձեռք էր մտածողը. հարկաւոր էր հարպունը զոհել. կեանքը աւելի թանգ էր մեզ համար:

Բոլորս վրա հասանք կացիններով: Խփիր հա խփիր... թուղն էլ թարսի պէս այնպէս էր ամրացել, որ ասել չի լինի:

Քրտնաթոր էինք եղել: Սիրտս արագօրէն խփում էր. մի բանից էի վախենում... ի՞նչ կը լինի մեզ հետ, եթէ կէտը յանկարծ...

Մտածելն ու իրագործւելը մէկ եղաւ: Նաւակը սկսեց թեքւել. կէտը այլ ևս չէր երևում. մտել էր ջրի տակ...

— Ի սէր Աստծու շուտով... շուտով, կտրեցէք, — գոռում էի ես...

Բայց ուր... մէկ էլ տեսնեմ կարծես մէկը նաւակին խփեց... ամեն ինչ տակն ու վրա եղաւ: Մի բոլորէ կարծես ինձ կորցրի: Երբ զգաստացայ, զգացի ովկիանի սառը ջրերը... Ջրի մէջ էինք: Բոլորս էլ լաւ լողալ գիտեցք:

Շուտով մեր նաւը հասաւ մեզ օգնութեան: Թուկի աստիճաններով վեր բարձրացանք: Իսկոյն վազեցի սենեակս թրջած շորերս փոխելու:

Նորից դուրս վազեցի և իսկոյն հրամայեցի նոր հարպուն պատրաստել, ապա ամենայն խրատութեամբ հետապնդել վերաւոր կէտին:

Նաւը չը գիտենք ո՞ր կողմ ուղղել: Թէև կէտը սովորաբար 15 բոլորէ մի անգամ դուրս է լողում նոր օդ շնչելու, բայց այս անգամ շատ աւելի երկար ժամանակ սպասեցի:

Ես ի հարկէ փորձւած էի, գիտէի պատճառը: Վերաւորւած կէտը, լուրջ վերաւորւած կէտն է միայն երկար ջրի տակ մնում, յաճախ մի ժամ շարունակ:

Ես չը յուսահատուեցի: Մեր նաւակն էլ կո-

րաւ: Թէ որ կէտին բռնեցինք, ապա մեր նաւակն էլ ետ կը ստանայինք:

Կէս ժամ էր անցել: Ուշադրութեամբ դիտում էի չորս կողմի ջրերը:

—Տեսայ, տեսայ,—ձայնեց նաւաստիներից մէկը մատով մի կողմ ցոյց տալով:

Նայեցինք այն կողմ. իսկապէս ջրի երեսին մի սև բան էր երևում: Յանկարծ ջրի մակերեւոյթից վեր սլացաւ մեզ լաւ ծանօթ շատրւանը. բայց որքան նա թոյլ էր. շատ բարձր չէր նետւում:

Այո, կէտը վերաւորւած է և այն էլ լուրջ վիրաւորւած:

Նաւը արագացրեց ընթացքը:

Մօտենում էին:

Այս անգամ հրամայեցի հարպունը նետել թնդանօթի միջոցով: Այժմեան հարպունը սովորական, հասարակ հարպուն չէր. սա աւելի մահաբեր էր. ծայրին տեղաւորւում է պայթուցիկ նիւթ: Երբ այդ հարպունը խրւում է կէտի մարմինը, նիւթը պայթում է, իսկ կէտը, պարզ է, տեղն ու տեղը մահանում:

Իհարկէ այդ այն դէպքում, եթէ հարւածը գլխի կողմ ուղղւած լինի կամ հարպունը խորը ներս մտնի:

Մօտեցանք:

Թնդանօթածիզը պատրաստւեց ու մէկ, երկու... հարպունը դուրս սլացաւ կէտի ուղղութեամբ: Հարւածը դարձեալ աջող էր: Հարպունը

կապած էր մեր նաւից. թոկը ձգւեց: Նաւը փոքր ինչ առաջ գնաց: Կէտը նորից ջրի տակ ընկաւ... Թոկը այլևս չէր ձգւում...

Մի բան մենք տեսանք ջրի երեսին և բոլորովին հաւաստիացանք, որ կէտը շատ լուրջ էր վիրաւորւել, եթէ ոչ մահացել:

Զննորը որոշ տեղ արիւնոտւել էր:

Կէտը նորից երևաց մեզանից շատ մօտ: Շատրւանը չը վշտաց: Սպանւած էր կէտը: Երկու հարպունն էլ ցցւած էին նրա մարմին, կէտից մի փոքր հեռու, յատակը վերև արած, լուրւմ էր մեր մակոյկը:

Ահագին կէտ էր, մինչև 30 արշին կը լինէր: Մօտաւորապէս 7000 փութ կը լինէր, գուցէ և աւել:

Կէտի մարմինը քշեցինք դէպի մօտակայ ափը:

Դէ, դու գիտես, որքան օգուտ տեսայ նրանից: Կէտի մէջքից սկսեցինք երկու կողմից քառակուսիներով ճարպ կտրատել: Եւ ի՞նչ ես կարծում, ինչպէս էինք կտրում... Դանակով միայն... Օ՛, ոչ, դանակը, նոյն իսկ մեծ դանակը անօգուտ գործիքներ են առանց մուրճի: Կարծում ես հեշտ է կտրել կէտի այնքան կարծր և հաստ ճարպը: Ես չափեցի և, երևակայիր, ճարպի հաստութիւնը կէս արշինի էր հասնում:

Դնում էինք ճարպի վրա յատուկ դանակներ, ապա մուրճով վրան խփում... Ուղղակի չեմ հաս-

կանում, ինչին է պէտք կէտին այդքան ճարպ...
Զարմանալի է...

— Զարմանալի ոչինչ չը կայ — ասացի ես:
Խորհատիանը փոքր ինչ ժպտալով նայեց ինձ
ու հարցրեց.

— Ով գիտէ խելօք գլուխները այդ զարմա-
նալի բանն էլ հասկացել են...

— Ի հարկէ, — ասացի ես, — առաջ դու վեր-
ջացրու թէ ինչ արիւր կէտդ, յետոյ ես կը պատ-
մեմ այդ մասին:

— Դեհ շատ լաւ, շարունակեմ, — սկսեց նորից
Խորհատիանը, — ճարպը քառակուսիներով կտրում
էինք ու դարսում մի կողմ: Յոյս ունէի կէտի
բեխերից էլ մեծ օգուտ տեսնել: Ինչ ես կար-
ծում, կէտը ունի ատամներ: Ես գոնէ չը տե-
սայ, բայց նրա բերանում մի ուրիշ բան տե-
սայ: Վերևի ծնօտից իջնում են մօտաւորապէս
100 մինչև 150 եղջիւրային թիթեղներ: Թիթեղ-
ները եռանկիւնաձև են և ներքին մասում փետ-
րաձև թերթերի են բաժանւում. սրանք են ահա
կէտի բեխերը... Թիթեղների արանքներում բռ-
նած գտայ մանր մանր ձկնեղէն և փափկամոր-
թեր... Այնքան մեծ կենդանի և այդպիսի փոքր
կենդանիներ է ուտում:

Լաւ, ես արդէն ասացի, որ կէտս մօտա-
ւորապէս կը քաշէր 7000 փութ... բայց երբ
ուրիշի մօտ էի ծառայում, մի անգամ սպա-
նեցի մի կէտ, որը, բոլոր մասնակցողների հա-

մոգմամբ, 9000 փութ կը քաշէր:

Ինչ որ է, առաջիս կէտ էր, որից բաւա-
կանին փող պիտի վաստակէի... Ձեր փողով մի
քանի հազար ռուբլի փող պիտի վաստակէի և ի
հարկէ վերջը վաստակեցի...

Խորհատիանը մի բոպէ լռեց, ապա հարցրեց.

— Տեսել ես կէտ, — բայց յիշելով, որ մի
անգամ արդէն յայտնել էի, թէ չեմ տեսել, — շա-
րունակեց. — Հա, ասացիր՝ չես տեսել... Գիտեմ
ինչպիսի աչքեր ունի. ահա իմ բռունցքը տես-
նում ես — այս բռունցքի չափ. և գտնւում են
այդ աչքերը մի փոքր ետ այն տեղից, որտեղ
միանում են վերին և ստորին ծնօտները: Դժա-
ծակերը վերևում են, գլխի գագաթին... Ահա այդ
ճիւղակներից էր շուռում շատրւանը: Թէև ես չեմ
տեսել, բայց ասում են, (տեսնող եղել է), որ
շատրւանը շատ անգամ մինչև 10 արշին բարձ-
րութեան է հասնում:

Ինչ երկարացնեմ... Մարմինը բոլորովին ան-
մազ է. այդ ինչպէս է, որ կաթնասուն կենդա-
նին անմազ է — ինձ համար հասկանալի չէ... Ես
գիտեմ, որ մազերը առհասարակ կենդանու մար-
մինը տաքացնում են, բայց զարմանալի է, կէ-
տը անմազ է, ինչպէս է այդ մեծ մարմինը տաք
մնում... Մի կողմից՝ մազ չը կայ, իսկ միւս կող-
մից, ինչպէս ասացի, կէս արշին հաստութեամբ
ճարպ... այդքան էլ ճարպ... ինչացո՞ւ... Աստ-
ւած գիտի...

Խրիստիանը թէև տեսել էր, շատ էր տեսել կէտ, լաւ ծանօթ էր նրա մարմնի կազմութեանը, բայց և այնպէս բնութեան գաղտնիքները նրան այնքան էլ հասկանալի չէին:

— Լսիր, Խրիստիան, — ասացի, ահա հիմա ես քեզ կ'պարզեմ թէ ինչու է կէտը անմազ և այնքան ճարպոտ... Յոյս ունեմ իմ խելօք մարդկանցից լսած բացատրութիւնս քեզ դուր կը գայ:

Դու էլ լաւ գիտես, որ կէտը կաթնասուն է. նա իր ձագերին կաթնով է կերակրում...

— Ինչպէս չէ, — մէջ մտաւ Խրիստիանը, — անդ էլ չիմանամ, քանի որ ես իմ աչքովս համոզւեցի, երբ նրա փորի յատուկ խորշերի մէջ պահած տեսայ նրա ծծերը: Վերջապէս մի անգամ տեսայ մի մեծ կէտ. իսկ նրա կողքից մի աւելի փոքր կէտ. ձագը կը լինի, մտածեցի... Թէ ինչպէս է ծծում մօր կաթը — այդ ես չեմ տեսել, բայց մեր քաղաքում կան իմացողներ: Ասում են, երբ կէտը ծնւում է, նա այնքան հասունացած է լինում, որ կարողանում է շարունակ իր մօրը հետեւել: Երբ կաթ է ցանկանում, գլուխը մօտեցնում է ծծերի խորշին, շրթունքներով ծծերը բռնում ու կերակրւում... Բայց էլի մի բան անհասկանալի է, ինչպէս է կարողանում կէտիկը իջ խոշոր շրթունքները շարժել ծծելիս...

Ես ասացի.

— Ճիշտ է, նրանց շրթունքները այնքան էլ ա-

զատ ու հեշտ չեն շարժւում — դրա համար, երբ մայրը զգում է, որ զաւակը բռնել է իր ծծերից, նա իսկոյն այնպէս սեղմում ու ձգում իր ծծերը, որ իսկոյն կաթը սրսկւում է, դուրս է նետւում և ընկնում ի հարկէ ձագի բերանը...

— Զարմանալի է, — ասաց Խրիստիանը, — Խնայդ այդ ինչպէս իմացան... Հաւատում եմ... ինչպէս չը հաւատամ...

— Հիմա, Խրիստիան, շարունակեմ մագերի և ճարպի մասին: Բոլոր կաթնասուններին անհրաժեշտ է մարմինը և ներքին գործարանները տաքութեան մէջ պահպանել — ցամաքի կաթնասունների մարմնի տաքութիւնը պահպանում են մագերը, մորթին, մենք էլ ենք. կաթնասուններ և մեր մարմնի տաքութիւնը պահպանում ենք շորերով, իսկ կէտը... նա անմազ է, այդ բաւական չի դեռ, կէտը Պտլանտեան և Պաղաղ ովկիանների հիւսիսային սառը ջրերում է ապրում... Հը՞, Խրիստիան, ինչ կասես...

Խրիստիանը պատասխանի փոխարէն ծոծրակը քորեց:

Ես շարունակեցի.

— Հիմա լսիր, ճարպոտ մարդը այնքան էլ ցրտից չի վախենում. ճարպը պահպանում է տաքութիւնը և չի թողնում որ իր միջով ցուրտ անցկենայ: Կէտի մարմինն էլ մեծ քանակութեամբ ճարպով է պատած. ովկիանի սառնութիւնը չի անցնում ճարպի միջով. ճարպը միաժամանակ

չի թողնում, որ կէտի տաքութիւնը դուրս գայ—
ինչ արած այդպէս է ճարպի յատկութիւնը...
Յետոյ մի բան էլ. ի՞նչ ես կարծում եթէ ճար-
պի մի գունդ ձգես ջրով լի բաժակը, ի՞նչ կը
լինի...

Խրիստիանը իսկոյն պատասխանեց.

—Կը լինի այն, ինչ որ բոլորիս էլ յայտնի
ճարպը. ճարպը թեթևութեան պատճառով ջրի
երեսին կը մնայ... Յետոյ...

—Շատ գեղեցիկ,—ասացի.—նախ և առաջ
պիտի ասեմ, որ ճարպի գունդը չի խորասուզուում
ոչ թէ իր թեթևութեան պատճառով, այլ նրա
համար, որ նա ջուր չի ծծում... եթէ ճարպի
գունդը ինկապէս ջուր ծծէր, նա աւելի ևս կը
ծանրանար և կը խորասուզւէր... Պիտի ասեմ, որ
ջրային թռչունների պոչի կողմը ճարպանման
հեղուկ է դուրս գալիս—այդ հեղուկը թռչունը
շարունակ քսում է փետուրներին և թռչունի վրա
շատ ջուր չի նստում, ջուրը չի ծծւում... Հիմա
յիշիր կէտին, ինքդ էլ լաւ գիտես՝ որքան մեծ է
նրա մարմինը... Ի՞նչպէս այդքան մեծ կեն-
դանին այնպիսի հեշտութեամբ մնում է ջրի երե-
սին և ծանրութիւնից չի խորասուզւում: Ճարպն
է, որ նրան թեթևացնում է, չի թողնում որ
կէտը ծանրանայ և ջրի տակ ընկնի: Եթէ ճարպը
բոլորովին չը լինէր կամ աւելի քիչ լինէր—կէտը
դժարութեամբ կ'ապրէր ովկիանի ջրերում և
մանաւանդ հիւսիսային սառը ջրերում. հազիւ կը

կարողանար սառցակոյտերի, սառցային սարերի
արանքներում լողալ... Ճարպը նրան տաք է պա-
հում... Դեհ, Խրիստիան, հիմա ինչ կասես:

Խրիստիանը լսում էր ուշադրութեամբ, վեր-
ջին հարցիս նորից ծոծրակը քորեց ու ասաւ.

—Ա՛յ գիտի հա, էտ որ գլուխն է կարողա-
ցել այդպիսի բաները հասկանալ: Շատ իրաւացի
է այդ բացատրութիւնը. և ինչպէս ես չը մտա-
ծեցի՝ այդ մասին...

Ես մի բան յիշեցի.

—Խրիստիան, մենք շատ հեռու գնացինք.
դու պատմեցիր կէտի մասին, բայց չասացիր,
ի՞նչ կապ ունի քո երեսիդ վէրքերը և կէտոր-
սութիւնը:

—Այս ըոպէիս, այս ըոպէիս,—նորից աշ-
խուժացաւ նա, բայց նկատեցի, ինչպէս նրա աշ-
քերով տխուր փայլ անցաւ: —Օ՛, —ասաւ նա—
գլխաւորը և ցաւալին հիմա է: Եթէ այդ գլխաւորը
չը լինէր, ես հիմա այստեղ ձեզ հետ նստած
չէի զրուցիլ: Ո՞վ գիտէ ովկիանի որ մասում կէ-
տի ետևից ընկած լինէի: Լսեցէք. Ես ասացի, որ
մեր սպանած մեծ կէտին մենք լաւ մաքրազար-
դեցինք—ինչ հարկաւոր էր՝ նաւը տեղափոխե-
ցինք: Մի բան էլ ասեմ: Երբ կէտի փորը կը տ-
րեցի, այնտեղ ստամոքսի մէջ բաւականին մանր,
շատ մանր ձկներ գտայ, կային և փափկամորթ
կենդանիներ... Ինչպէս երևում է, կէտը խոշոր
բաներ ուտել անկարող է, նրա որկորը (ես ինքս

տեսայ) շատ փոքր է և ատամներ էլ չունի, որ խոշոր ձուկը մաս-մաս անելով ստամոքսը ձգի... Առաջ ես չէի հասկանում թե այդ ինչպէս է կշտանում կէտը մանր-մունր կենդանիներ ուտելով, յետոյ ես իմացայ, որ կէտը սոված չը մնալու համար պիտի մի անգամից մեծ քանակութեամբ պաշար կուլ տայ: Եւ նա իւրաքանչիւր ձկնիկը առանձին չի բռնում—ինչպէս բռնել փոքրիկ կենդանուն, քանի որ կէտը ատամներ չունի—շատ դժւար է: Դրա համար էր կէտը մի անգամից շատ ջուր է լցնում բերանը, որի հետ ի հարկէ մանր կենդանիներ են ընկնում, բերանը քիչ ծածկում է: Եռանկիւնաձև թիթեղները հասնում են ներքին ծնօտին: Կէտը նորից ջուրը դուրս է թողնում թիթեղների արանքներով, իսկ կենդանիները մնում են բերանում: Ես ինքս թիթեղների, բեխերի արանքներին բաւականին ձկնեղէն գտայ: Ապա ձկնեղէնը կուլ է տալիս...

Բռնած կէտին մաս-մաս արի, արժէքաւոր կտորները նաւս տարայ ու հայրենիք վերադարձայ: Մեծ գումար վաստակեցի: Երկու գրպաններս էլ փքւեցին: Մօտս այնքան փող կար, որ բաւական էր իմ ծրագրները իրագործելու՝ տուն առնելու, մի հողի կտոր էլ հետը. ապա ապրէի հանգիստ սեփական աշխատանքով ձեռք բերած տնակում:

Բայց հրտեղ... Աշխարհիս ամենամեծ սա-

տանան (անիծւի նա) մտել էր գլուխս և դժւար էր գալիս, որ ասես—միտք էլ չունէր. շարունակ ուղեղս ծեծում էր՝ «այ Խրիստիան, երկու դրամ ունես, չորս դարձրու»:

Չեմ ուզում—ասում եմ: Սատանան էլի. «այ Խրիստիան, երկուսը չորս դարձրու, երկուսը չորս դարձրու, քաղաքում մի լաւ տուն առ»: Տէր Աստուած... Անպիտանի խօսքին կպայ: Գլուխս տարաւ:

Երկու շաբաթ չանցած ես էլի ովկիանումն էի. էլի կէտի ետեից էի ընկել. ցանկանում էի գումարս երկուսի տեղ չորս դարձնել:

Ես այս անգամ վստահ էի, որ մի մեծ կէտ պիտի բռնեմ: Հազիւ հորիզոնի վրա սև գիծ ու սպիտակ շատրւան երևաց—նաւը ուղղեցինք այն կողմ: Մօտենում էինք կէտին: Կէտը մեծ էր, շատ մեծ: Չը գիտեմ մեղանից վախեցաւ, թէ տրամադրութիւնն էր վատ, կէտը սկսեց պոկ գալ մեղանից, շուտով ջրի տակ մտաւ. 25 րոպէից յետոյ դուրս եկաւ շատ և շատ հեռու...

Այդ չեղաւ: Յոյսս կտրեցի նրանից:

Ուրիշ կէտի էի սպասում:

Երևաց երկրորդ կէտը: Հիմա սրան սկսեցի հետապնդել. հրամայեցի հարպունը պատրաստել: Հարկաւոր էր շտապել, թէ չէ սրանից էլ կը զրկւէի: Սա էլ խոշոր տեսակից էր: Հարպունը նետուեց. նետուեց անաջող... Կէտը ջրի երեսին էր:

Դարձեալ հետապնդեցինք, նորից հարպունը օդը ճղելով սլացաւ դէպի կէտը և... չը վրիպեց: Կէտը մի ըոպէ անշարժացաւ, ապա շարժեց, մարմինը ամբողջովին սկսեց տատանուել, չորս կողմը ալիքներ գոյացան:

Յանկարծ կէտը վիրաւոր գլուխը մեր կողմը դարձրեց... (լաւ մահացու չէինք վիրաւորել) և ինչպէս սլացաւ դէպի մեր կողմը, բոլորս էլ զգացինք սոսկալի վտանգը. նաւը ետ նահանջեց. բայց կէտի ընթացքը աւելի արագ էր, մօտեցաւ մեր կողմ, ջուրը սաստիկ ալեկոծուում էր:

Յանկարծ նաւս մի խիստ ուժեղ հարձած զգաց, այնքան ուժեղ, որ տախտակամածը ճռուաց, ես դիտողական սենեակում էի: Նորից աւելի խիստ հարձածի ենթարկեց նաւս, չորս կողմ տակն ու վրա եղաւ, ճռուոց, ճռթճռթոց, գոռում, գոչիւն: Ես գնդակի պէս վեր նետուեցի և ընկայ բաց սրահից (հիմա այստեղ էի) ներքև: Կարծեմ յետոյ ծխնելոյզը մեծ աղմուկով ցած գլորւեց... Չորս կողմ փռի... ծուխ... և ինձ մի տարօրինակ մառախուղ սկսեց պատել... Պառկած էի անշարժ, երեսիս զգում էի ինչ որ տաք, շարունակ հոսող հեղուկ, անդամներս շարժել անկարող էի... Յետոյ, կարծես ականջիս շշուկ անգամ չէր հասնում... ճրտեղ էի... անապատում. յետոյ թմրեցի... թմրեցի... Եւ չը գիտեմ ինչ դրութեան մէջ ընկայ:

Միայն, եթէ չեմ սխալուում, զգացի, որ ինձ մի բան դիպաւ, այնուհետև ոչինչ յայտնի չէ...

Երբ զարթնեցի, նայեցի չորս կողմս—անսովոր շրջապատ. սպիտակ պատեր, սպիտակ աթոռներ, սպիտակ սեղաններ... լաւ լսեցի. մէկն ասաւ.

—Ուշքի եկաւ արդէն... վտանգը անցաւ: Նայեցի խօսողի կողմը: Մարդ էր սպիտակ զգեստով: Հասկացայ—բժիշկ էր: Երբ աչքիս երևացին մի շարք սպիտակ մահճակալներ—միտքս աւելի պարզեց—հիւանդանոցումս էի...

—Չուր եմ ուզում,—ասացի. բերին իսկոյն. խմեցի. զովացրեց. կարծես ուժերս աւելացան...

—Դէհ, պարոն,—հարցրեց բժիշկը —ինչ պէս էք:

—Լաւ եմ—ասացի,—բայց, պարոն բժիշկ, ինչո՞ւ ես հիւանդանոցումս եմ... ինչո՞ւ...

—Յետոյ կիմանաք. այժմ հանգստացէք:

Ինձ ինչ որ դեղ խմացրին, ապա հեռացան: Ես այժմս կարող էի ազատ մտածել թէ ինչ է եկել իմ գլխին...

Հասկացայ, որ իմ հիւանդութեան պատճառը վերջին կէտորսութիւնն էր: Յիշեցի կէտի կատաղի հարձածը: Ես վերևից ներքև գլորւեցի, շատ էր արիւն հոսել ստացած վէրքերից — դրա համար էլ թուլացել էի և ուշքից գնացել...

Այժմ հիւանդանոցում երեսս երեք կողմ փաթաթած էր շորերով: Մէկէն ի մէկ ցաւ էի

զգում...

Ինչ երկարացնեմ. միւս օրը օգնականս, որ նոյնպէս կենդանի էր մնացել և անմնաս, պատմեց ինձ ինչպէս ես ազատեցի: Երբ կէտը երկրորդ անգամ իր ագիով հարւածեց, նաւը ճռռաց, ճեղքւեց, սկսեց խորտակել... միւս կողմից էլ հըրդեհ սկսեց: Բանւորներից մի քանիսը խեղդեցին, մեքենավարը այրւեց... օգնականը մի քանի բանւորներով ինձ էր որոնում. շուտով գրտան ինձ ուշաթափ, խակոյն մակոյկը տարան... մի կերպ մակոյկը ազատեց կէտի զայրոյթից. ինձ ծանօթ կէտորսներից մէկը մեզ մեր անվրստահելի մակոյկից իր նաւը վերցրեց և ապա մեր քաղաքը հասցրեց...

Ահա ամբողջ պատմութիւնը:

Ես կորցրի վաստակած գումարիս մեծ մասը. նաւս բոլորովին խորտակել էր: Իսկ ես այնպիսի վէրքեր էի ստացել, որ շարունակել նորից կէտորսութիւնը—բոլորովին անհնարին էր...

Երկար պատմութիւն է, թէ ինչպէս ընկայ այս շոգենաւը, որտեղ ես ու դուք զրուցում եմք. շատ տարի է անցել... Զէի ցանկանում ծովին բոլորովին հրաժեշտ տալ, ծովը—իմ կեանքս է, առանց նրա թարմ օդը շնչելու—ես անկարող եմ ապրել... Այժմ, ինչպէս տեսնում էք, նաւաստի եմ... Կորաւ և առնելիք տնակս և հողս... Միայն մնացին դէմքիս վէրքերի հետքերը...


Ահա թէ ինչ կապ ունին այդ հետքերը կէտորսութեանս հետ...»

Անցեալի տպաւորութեան տակ Խրիստիանը մոռացել էր չիբուխից մի քանի անգամ ծխելու. նորից ծխախոտ լցրեց, նորից վառեց և ապա մեծ ախորժակով ծուխը ներս քաշելով՝ դուրս թողեց քթածակերից...

—Այժմ դէպի գործ—ասաւ Խրիստիանը.— հերթըս մօտենում է:

Ժպտաց, բայց աչքերի մէջ նկատեցի փայլող արցունքներ... Գնաց նաւաստիների բաժինը...

Շոգենաւը մեղմ առաջ էր ընթանում... Նայեց հեռուն... Զորս կողմ ջնւրը... ջնւր և ջնւր...



551x

Handwritten text in Armenian script, appearing as bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 15 horizontal lines.

216

ՀՀ Ազգային գրադարան



NL0396019

„ՆՒՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խմբագրութեամբ «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

1. Գաւոցուկ—Ամիրան Դարեջանիձէ, փոխ. Աթ.
Խնկոյեանի 25 կ.
2. Սէյրի—Դերձակի աշակերտը, վոդըւիլ. 10 »
3. Աղւէսն ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Պսակ—
պսակ—պատկերազարդ հեքիաթներ 10 »
4. Ս. Գալաշեան — Կապիկներ, բնագիտական
զրոյց 10 »
5. Մարկ Տւէն—Մահաւան օղակը. պատմաւածք,
Թարգմ. Մ. Թաւաքալեանի 7 »
6. Կ. Ստանիսլովիչ—Պատիկ նաւաստին. պատմ-
ւածք, Թարգմ. Սիմակի 5 »
7. Մարգար Աւետիսեան—Երեք խրատ. Պղնձէ
քաղաքի զրոյցներից 20 »
8. Է. Սէտուն-Տոմպսոն—Վինիպեկի գայլը. պատ-
մաւածք հերոս կենդանիների կեանքից, Թարգմ.
Սիմակի 20 »
9. Լ. Պրայս եւ Զ. Զեյքերտ—Առասպելական հե-
րոսներ. Թարգմ. Գ. Իփէկեան 20 »
10. Ռուբէն Գալըիէլեան—Ովկիանի թագաւորը.
Կէտի մասին, բնագիտական զրոյց 10 »

Դիմել «Հասկերի» խմբագրութեան. Тифлисъ,
редакция „Аскеръ“.

Յաւելած «ՀԱՍԿԵՐ» ամսագրի